

ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔ

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈԼՈՐՏ

Համայնքի ղեկավարը համայնքի տարածքում պետական, մշակութային քաղաքականությունն իրականացնում է արվեստի դպրոցի, գրադարանի և մշակույթի ակումբի գործունեությամբ:

Արվեստի դպրոցը ստեղծվել է 1980 թվականին: Շենքային պայմանները բավարար են: Դպրոցում սովորում են 107 աշակերտներ, որոնք ընդգրկված են դաշնամուրի, ժողովրդական նվագարանների, փողային և գեղարվեստի բաժիններում: Դպրոցի աշխատողների թիվը 18 է: Շնորհալի պատանի երաժիշտ կատարողները պարբերաբար մասնակցում են կազմակերպվող համայնքային և մարզային միջոցառումներին, առավել շնորհալիները՝ մրցույթ-փառատոների, արժանանալով տարբեր կարգի մրցանակների:

Արվեստի դպրոցը կարիք ունի երաժշտական գործիքների և երաժշտական գրականության, մասնավորապես դաշնամուր-ռոյալ, քանոն գործիքների:

Համայնքի Գրադարանի գրքային ֆոնդը կազմում է 13.866 գիրք:

2014թ. գրքային ֆոնդը Թեղուտի /94/ և հանրային գրադարանի /54/ կողմից համալրվել է ընդհանուր թվով 148 կտոր գրքերով:

Թվով 3824 ընթերցողի տրամադրվել է 2 հազարից ավել գրականություն: Աշխատողների թիվը՝ 1, կազմակերպված միջոցառումների թիվը՝ 8 /Ազգային, պետական տոներ/, գրական-երաժշտական ցերեկույթներ, գրքային ցուցահանդեսներ, շնորհանդեսներ և այլ՝ 24:

3. Պետության կողմից պատվիրակված լիազորությունների շրջանակում գյուղապետարանը կազմակերպում է մասսայական միջոցառումներ Հայաստանի Հանրապետության պետական տոների՝ Անկախության, Սահմանադրության, Առաջին Հանրապետության, Հաղթանակի, Ազգային բանակի օրերի, մայրության և գեղեցկության, ինչպես նաև Եղեռնի ու Երկրաշարժի զոհերի հիշատակության օրերի առթիվ: Բացի վերը նշվածը, հաճախակի կազմակերպվում են նաև ժամանցային միջոցառումներ:

5. Նպատակային աշխատանքներ են կատարվում համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների պահպանության ողջությամբ: Մշտապես իրականացվում են դրանց տարածքների սանիտարական մաքրումներ և ընթացիկ բարեկարգումներ համայնքի դպրոցականների և այլ կազմակերպությունների միջոցով:

6. Համայնքը մշտական ուշադրություն է դարձնում ժող. ստեղծագործությունության և գեղարվեստական ինքնագործությունության, ազգային արհեստների պահպանմանն ու զարգացմանը:

Համայնքի կողմից մշտապես խրախուսվում են ցուցահանդեսների մասնակից վարպետները և ինքնուս ստեղծագործողները:

7. Գյուղապետարանի կողմից վերահսկվում է մշակութային կառույցների համալիր աշխատանքային գործունեությունը՝ ամենամյա և ընթացիկ հաշվետվությունները, աշխատանքային ծրագրերը:

Համայնքը «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն աջակցել և աջակցում է համայնքի տարածքում գտնվող հուշարձանների պահպանության գործին:

Համայնքի վարչական տարածքում շինարարական, գյուղատնտեսական և այլ աշխատանքների կատարման ժամանակ հուշարձաններ չեն հայտնաբերվել:

Հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառում գյուղապետարանի կողմից ապահովվում է համայնքի տարածքում գտնվող հուշարձանների պահպանական գոտիներում սահմանված հատուկ ռեժիմի պահանջների կատարումը:

Գյուղապետարանի կողմից հուշարձանի պահպանական գոտում հողի, համայնքի սեփականություն համարվող հուշարձան-շենքերի և շինությունների վարձակալությամբ տրամադրելու կամ սեփականության կարգով վաճառքի դեպքեր չկան, ուստի օգտագործողների հետ հուշարձանների պահպանության պայմանագրերի կամ պարտավորագրերի կնքման անհրաժեշտություն չկա:

Տեղեկությո՞ւ՝ Մհեր Մելիքյանի